

ԲԱՆԱԿԵԱՇԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

ՄԻ ԳՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Պրոֆ. Ա. Գ. ԱՔՐԱՀԱՄՅԱՆ, պրոֆ. Գ. Բ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«Սովետական գրող» հրատարակչության նախաձեռնությամբ «Հայ մատենագիրներ» մատենաշարով հրատարակվում են հայ հին և միջնադարյան դպրության նշանավոր ներկայացուցիչների Լրկերի աշխարհարար թարգմանությունները: Այդ մատենաշարով 1979 թ. մեր թարգմանությամբ լույս է տեսել Անանիա Շիրակացու մատենադրությունը: Թարգմանությունը խմբագրել է պրոֆ. էդ. Աղայանը:

Ասել, թե մեր այդ թարգմանությունը կատարյալ է և ղերծ է թերություններից, կլինե՞ր պարզամտություն: Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը», որն ուսումնասիրվում է շուրջ Լրեր հարյուր տարի, թարգմանված է մի քանի անգամ և դեռ այժմ նկատվում են թարգմանական կարգի անհշտություններ. իհարկե անկարելի էր սպասել, որ Շիրակացու մատենադրության թարգմանությունը, որն առաջին անգամ է կատարվում, լինե՞ր անթերի: Պետք է նկատի ունենալ, որ Շիրակացու մատենադրությունը խիստ բարդ բնագիր է, այն գրված է խառը հունարանով, գործածված են լեզվական դիտություններին վերաբերող անսովոր բազմաթիվ տերմիններ, որոնք մեծ դժվարություն են հարուցում թարգմանության գործում: Պատահական չէ, այն իրողությունը, որ շնայած հարյուր հիսուն տարուց ավելի է, ինչ խոսվում է Շիրակացու աշխատությունների կարեւորության մասին, սակայն ոչ ոք հանձն չի առել դրանք թարգմանել:

Ցանկանալով գրել Անանիա Շիրակացու Լրկի մեր թարգմանության գրախոսությունը¹, Վ. Առաքելյանը, թվում է թե բարեխիղճ ձեռով կծանոթանար թարգմանությանը, մատենագրույց կաներ նրանում տեղ գտած թերությունները և կտար կատարված աշխատանքի անկողմնակալ գնահատականը: Դժբախտաբար, նա գործին մոտեցել է կանխակալ միտումով՝ նպատակ ունենալով ոչ թե օգնող դիտողություններ անել, այլ սեպնել կատարված աշխատանքը:

Գուցե մենք անուշադրության մատենինք Վ. Առաքելյանի գրախոսականը որպես միտումնալից, սակայն նկատի ունենալով այն, որ մեր տարածաշրջանում Վ. Առաքելյանի հետ միայն թարգմանության շուրջը չէ, այլև աղբյուրագիտական լուրջ խնդիրների, ուստի անհրաժեշտ համարեցինք քննության առնել նրա դիտողությունները՝ հետևությունները թողնելով անկողմնակալ ընթերցողներին:

Առաքելյանն իր գրախոսականի սկզբում քննության է առել երկու կարևոր հարց՝ Շիրակացու գաղափարական ուղղությունը և տվյալ ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական հարաբերությունները:

Շիրակացու գաղափարական ուղղության հարցի քննարկման համար Վ. Առաքելյանը հիմք է ընդունել թարգմանության առաջաբանում հայտնած մեր հետևյալ կարծիքը. «Խոսելով VII դարի մատենագրության մասին, սակայն, պետք է նկատել, որ այն միատարր չի եղել. ունեցել է երկու թև, երկու տարբեր ուղղություն, դրանցից մեկը պաշտոնական դոգմատիկալով առաջնորդվող, այլ դոգմաները պրոպագանդող պահպանողական ուղղությունն է, իսկ մյուսը՝ իր ժամանակի առաջադեմ խավերի հայացքներն արտահայտող, հելլենիստական առաջադեմ գիտության և գրականության ավանդույթին հետևող ազատամիտ ուղղությունը. երկրորդ ուղղության ակնառվոր ներկայացուցիչներից է Անանիա Շիրակացին» (էջ 10): Վ. Առաքելյանը սկզբից աղճատված ձևով բերել է մեր ասածը և վերջում հեզնելով ավելաց-

¹ «Պատմա-բանասիրական հանդես». 1981, № 4, էջ 295—300:

րել. «Կարիք կա՞ ասելու, որ առաջարանի հեղինակները Շիրակացուն դնում են այս երկրորդ ուղղության ներկայացուցիչների շարքը» (էջ 295):

Ինչպես երևում է, գրախոսողին դուր չի եկել Շիրակացու գաղափարական ուղղության մասին մեր հայտնած կարծիքը. նա համամիտ չէ մեզ հետ, որ VII դարում գոյություն է ունեցել գաղափարական երկու ուղղություն, որոնցից մեկը եղել է պահպանողական, իսկ մյուսը՝ առաջադիմական, ուստի անհարկի հարցումով դիմել է մեզ «Ո՞րտեղ է այդ առաջին ուղղությունը» և «Ո՞ւր են երկրորդ թևի մյուս ներկայացուցիչները» (էջ 295): VII դարի գաղափարական ուղղությունների անտեսումը Վ. Առաքելյանի մոտ պատահական չէ, այլ՝ սկզբունք: Նա մերժում է գաղափարական ուղղությունների հետ կապել ոչ միայն Անանիա Շիրակացուն, այլև հայ մյուս մատենագիրներին ընդհանրապես: Դրանում կարելի է գյուրություն մը համոզվել՝ կարդալով Մովսես Կաղանկատվացու և Կիրակոս Գանձակեցու երկերի թարգմանության համար նրա դրած առաջաբանները, որոնցում ոչ մի խոսք չկա այն մասին, թե տվյալ ժամանակ ինչպիսի գաղափարական ուղղություններ են գոյություն ունեցել և իր հեղինակները այդ ուղղություններից որի հետևողներն են: Մատենագիրներին սոցիալական միջավայրից կտրելու և մեկուսացած ներկայացնելու արատավոր տեսակետը նորություն չէ: Զարմանալին այն է, որ Առաքելյանը մեր օրերում էլ հետևում է հակադիտական, վաղուց մերժված այդ տեսակետին:

Սկզբունքային կարևոր հարց է այն, թե մեր մատենագիրները ընթերցողներին ներկայացնելիս պե՞տք է արդյոք ասել, թե նրանք հասարակական և քաղաքական ինչ պայմաններում են հանդես եկել և ի՞նչ շահով են նրանք կապված եղել ժամանակաշրջանի հետ, թե՞ այդ բոլորն ավելորդ է: Վ. Առաքելյանը մեր կատարած աշխատանքի երկրորդ թերությունը համարել է հենց այն, որ մենք զրբի առաջաբանում իր անհարկի տեղ ենք հատկացրել ժամանակի սոցիալ-տնտեսական հարաբերություններին: Նա գրել է. «Մինչև VII դար հասնելը երկու և ավելի մանրատառ էջեր պետք է կարդալ Հայաստանի բաժանման, թագավորության անկման, նրա կախյալ վիճակի, նախարարների իրավունքների և այլնի մասին, որ եթե չաւսնեմ անկախորդ է (ընդգծումը մերն է—Ա. Ա.), ապա կարող ենք ասել, որ ամեն մի գրքի առաջաբանում կարելի է կարդալ և ոչ մի կապ չունի Շիրակացու հետ» (էջ 296):

Առաջաբանում, իրոք, մենք հինգ էջ հատկացրել ենք Անանիա Շիրակացու ապրած շրջանին՝ պատճառաբանելով, թե ինչու ենք այդ սնում. «Յուրաքանչյուր հեղինակ,— գրել ենք մենք,— լինի գիտնական, թե դոկտ, բոլոր թելերով սերտորեն կապված է իր դարաշրջանի հետ, ուստի անհրաժեշտ ենք համարում համառոտակի կանգ առնել մեր հեղինակի ապրած ժամանակաշրջանի վրա» (էջ 5): Ապա ներկայացրել ենք տվյալ ժամանակի սոցիալ-տնտեսական հարաբերությունները, VII դարում Հայաստանի տնտեսական կյանքում տեղի ունեցող տեղաշարժերը, գիտության և գրականության զարգացմանը խթանող ազդակները, Հայաստանում գործող դավաճանները, VII դարի ալբի ընկնող մատենագիրներին և վերջում այդ ժամանակաշրջանի ու այդ շրջապատի մեջ բնութագրել Շիրակացուն:

Հարցնում ենք, ճի՞շտ ենք վառվել արդյոք, որ Շիրակացու գործունեությունը, նրա հանդես գալը պայմանավորել ենք իր ապրած ժամանակով, թե՞ ավելորդ են եղել այդ ամենը: Մենք առաջնորդվել ենք ժամանակակից աղբյուրագիտության առաջադրած հետևյալ սկզբունքով. «Աղբյուրի հաղորդած տեղեկությունների ամբողջականությունը և հավաստիությունը պարզելու համար անհրաժեշտ է բազմակողմանի վերլուծման ենթարկել հասարակական-սոցիալական հարաբերությունները և առանձին դասակարգերի գաղափարները, այսինքն՝ այն պայմանները, որի մեջ առաջացել է աղբյուրը»²: Մենք գտնում ենք, որ «Հայ մատենագիրներ» մատենադարով հրատարակված որոշ թարգմանությունների մեջ նկատվող մեծ թերություններից մեկը դրած առաջաբաններում մատենագիրներին իրենց ժամանակակից և սոցիալական շրջապատից կտրելու սխալ մոտեցումն է:

Գրախոսության մեջ Վ. Առաքելյանը մեզ մեղադրել է, որ մենք թարգմանության առաջաբանում չենք նշել Մատենադարանի գիտական աշխատող Ա. Մաթևոսյանի վաստակը շիրակացիագիտության բնագավառում: Նա գրել է. «Առաջաբանի հեղինակները լուրջ են և ոչ մի ակնարկ անգամ չեն անում ձեռագրագետ Արտաշես Մաթևոսյանի «Անանիա Շիրակացու «Քննիկոն» խիստ արժեքավոր հոգովածների մասին, որ գիտական նորություն է և պարզորոշ ցույց է տալիս, որ աշխատությունը պետք է կոչվի «Քննիկոն»: Եթե առաջաբանի հեղինակները չեն

2 Советская историческая энциклопедия. Т. VI, с. 597.

ընդունում Ա. Մաթևոսյանի բացահայտումները, ապա դրանք սկսեց է հերքել իրենց պատճառարանություններով ու փաստարկումներով» (էջ 295)։

Գրքի առաջաբանում, իրոք, չենք խոսել Ա. Մաթևոսյանի հոգվածի մասին, որովհետև նրա «բացահայտումները» մենք համարում ենք անհիմն և սխալ։ Նրա մատնացույց արած հոգվածներին հանգամանորեն անդրադարձել է Գ. Բ. Պետրոսյանը։ Գ. Բ. Պետրոսյանի այդ հոգվածների հետ, անշուշտ, ծանոթ է գրախոսը, հետևապես նրա մեղադրանքը գտնում ենք անտեղի։

Ի դեպ, անընդունելի է գրախոսողի «Քննիկոն» բառի առաջարկած ստուգաբանությունը, որի նպատակն է արդարացնել Ա. Մաթևոսյանին։ «Քննիկոն» բառը, գրել է նա, բաղկացած է «հայերեն Բնիկ արմատից և հունական իկոն մասից» (էջ 295)։ Հիմք չունենք մերժելու «Հայկազյան բառարանի» հեղինակների և մեր աչքի ընկնող լեզվաբանների՝ Հ. Աճառյանի, Ստ. Մալխասյանցի և էդ. Աղայանի բառարաններում այդ բառին տված բացատրությունը։ Քննիկոնը կամ Քրոնիկոնը, ինչպես ապացուցված է, հունարենից փոխառնված *χρονολογια* բառն է, որն ունի ժամանակագրություն իմաստը (ռուսական хронология-ն)։

Մտացածին է Վ. Առաքելյանի այն պնդումը, թե իբր «Վասն որպիսութեան կենաց իւրոց» բնագիրը Շիրակացու ինքնակենսագրությունը չէ. «Շիրակացին դժվար թե ինքնակենսագրություն գրած լինեք», — գրել է նա։ Շիրակացու ինքնակենսագրական «Ներածության մի մասը» համարելու նրա փորձը սխալ է, ավելորդ ենք համարում նույնիսկ հակառակն ապացուցելու համար յիստտեր բերել։

Վ. Առաքելյանը, թարգմանության շարքերը քննելուց առաջ, անդրադարձել է Շիրակացու հրատարակված բնագրին և առաջարկել մի քանի ուղղումներ՝ հիմք ունենալով ձեռագրերը։ Նա առաջարկել է հետևյալ հինգ բնագրային տարբերակները. «անարգեցաւ» բառը փոխել «անգարեցաւ», «ճանապարհ հորդելը» միացնել և դարձնել «ճանապարհորդել», «ձեռնապատրաստ» բառը բաժանել և դարձնել «ձեռն և պատրաստ», «բացդրութիւն» բառը դարձնել «բացատրութիւն»։

Մեր թարգմանության համար, ինչպես հայտնի է, հիմք է ծառայել Շիրակացու հրատարակված մատենագրությունը, որը համահավաք բնագիր չէ, այլ հիմք է ունեցել ընդօրինակություններից միայն մեկը, իսկ մյուս ձեռագիր ընդօրինակությունները հաշվի չեն առնված։ Թարգմանության կապակցությամբ մեր խնդիրը չէր անդրադառնալ նրանց, այդ գիտի նաև գրախոսողը։ Բայց քանի որ նա գործին ձեռնամուխ է եղել բոլորովին այլ միտումով, ուստի տպավորություն ստեղծելու համար քննարկման խնդիր է դարձրել նաև բնագրային տարբերակները։

Մեր նպատակից դուրս է առաջարկված տարբերակների քննարկումը, բայց ցույց տալու համար, թե որքան անհիմն են բնագրային բնույթի նրա արած դիտողությունները, մատնացույց անենք նրանցից միայն մեկը։ Թվաբանության մեջ հնում հանման գործողությունը կոչվել է «բացդրութիւն»՝ բաց դնելու, հանելու իմաստով, ինչպես որ գումարման գործողությունն էլ կոչվել է «ընդունելութիւն»՝ ընդունելու, ավելացնելու միաստով։ Շիրակացու հանման գործողության աղյուսակները վերնագրված են «բացդրութիւն»։ Առաքելյանը, չհասկանալով բառի բուն նշանակությունը, առաջարկել է «բացդրութիւնը փոխել «բացատրութիւն» բառով, որ բացահայտ սխալ է։

Անդրադառնանք այժմ Վ. Առաքելյանի արած թարգմանական դիտողություններին։ Քրոնիկոնը ավելի ակնբախ դարձնելու համար մենք նախ բերում ենք բնագիրը (Բնգ. կրճատումով), նրա դիմաց թարգմանությունը (Թրգ. կրճատումով), Վ. Առաքելյանի դիտողությունը (Վ. Ա. կրճատումով) և մեր պատասխանը։

Բնգ.— «Եւ յամենայնի լսէի զերանութիւն թրգ.— «Ամեն բանում լսում էի իմաստունների և իմաստութեան հետամուտ եղողների երանի և իմաստութեան հետ իմաստութեան հետ ի դիւրն- անրի և իմաստության հետամուտ եղողների երանութեան խոսքերը, ինչպես այդ Սողոմոնի կողմից է հանձնարարվում» (էջ 25)։

Վ. Ա.— «Այստեղ խոսքը իմաստուններին և իմաստության հետամուտներին երանի տալու մասին է, իմաստուններն ո՞ւմ պետք է երանի տալին։ Այս հաստատում է անմիջապես հաջորդ նախադասությամբ՝ «...երանութեան կամեցայ ժամանել» (էջ 296)։

Բնագրից մեջբերումը վերցված է աղճատված, բաց են թողնված «Եւ ի Սողոմոնէ է հրամայեալ» ընդգծված բառերը, որոնք հնարավորություն են տալիս մեզ պարզելու, թե Սո-

դոմենի խոսքն ինչ երանություն մասին է. որին երազել է հասնել Շիրակացին։ Սողոմոնը երանության մասին խոսել է «Առակաների» մեջ։ Նրա մոտ տասնյակ գովասանական խոսքեր կան իմաստունների հասցեին. «Զփառս իմաստունք ժառանգեսցին, իսկ անբարիշտք բարձրացուցին զանարդանս» (Դ, 34), «Բանից իմաստունոց մտո զունկն քո» (ԻԲ, 17), «Իմաստուն լեր որդեակ» (ԻԷ, 11) և այլն։ Քննադատի կողմից «Ինչպես այդ Սողոմոնի կողմից է հանձնարարվում» բառերը հանելուց հետո մեր թարգմանությունը երկիմաստ է դառնում. այն կարելի է հասկանալ այնպես թե՛ «լսում էի իմաստուններից և իմաստության հետամուտ եղողներից իրենց մասին ասված խոսքերը», մյուսը թե՛ «լսում էի իմաստունների և իմաստության հետամուտ եղողների մասին ասված երանության խոսքերը»։ Քննադատի աղճատման հետևանքով հասկացվում է առաջինը։ Այսպիսով, քննադատը մտածված ձևով նախ աղճատում է կատարել, մեղադրանք ստեղծել, ապա քննադատել։

Բնգ.— «Յոյժ կարատեալ արունստի համարողութեանն, խորհեցայ՝ եթէ ոչինչ յամարի առանց թուոց, մայր կարծելով ամենայն իմաստից» (էջ 206)։

Թրգ.— «Հույժ սիրելով համարողության արվեստը, խորհեցի, թե առանց թվերի ոչինչ չի հիմնավորվում՝ մայր կարծելով այն բոլոր ուսմանց» (էջ 27)։

Վ. Ա.— «Այստեղ խոսքը ոչ թե հիմնավորելու, այլ կարգավորելու, կարգի բերելու մասին է» (էջ 296)։

Մեջբերումը վերցրել է աղճատված, բաց են թողնված «մայր կարծելով ամենայն իմաստից» ընդգծված բառերը։ Շիրակացին ուզում է ասել, որ առանց թվերի ոչինչ չի լինում, այն մայրն է, այսինքն՝ հիմքն է բոլոր տեսակի ուսմունքների, ուստի այստեղ «հիմնավորել» բառը շատ ավելի ճիշտ է, քան կարգավորել կամ կարգի ընկնել։

Բնգ.— «Եւ ամենայն ինչը իւր առան յաւարի» (էջ 208)։

Թրգ.— «Իսկ իր ունեցած ողջ գույքն ավար են վերցնում» (էջ 27)։

Վ. Ա.— «Առան աւարի նշանակում է կողոպտեցին, թալանեցին» (էջ 297)։

Կողոպտելը, իհարկե, ավարի առնել չի նշանակում, սխալվում է գրախոսողը։ Իսկ թալանելու և ավարի առնելու մեջ մենք տարբերություն չենք տեսնում, մանավանդ որ աշխարհաբարում սովորական են ավար առնել, ավար վերցնել, ավարի ենթարկել արտահայտությունները։

Բնգ.— «Իսկ նա ոչ անսայր նոցա՝ յերկիր իւր գթալով ըստ գրեցելումն» (էջ 208)։

Թրգ.— «Սակայն նա չի լսում նրանց՝ կարհիկից հանդիսանալով իր երկրին» (էջ 28)։

Վ. Ա.— «Գրալ այստեղ ձգտել, փափագել է նշանակում և ոչ թե կարեկից հանդիսանալ» (էջ 297)։

Բնագիրը բերել է աղճատված. բաց է թողնել ընդգծված «ըստ գրեցելումն» բառերը։ Ապա, զբաղ բառը ոչ տվյալ նախադասության մեջ և ոչ էլ հայոց լիզվում ընդհանրապես, չունի ձգտել կամ փափագել իմաստը, հետևապես դիտողությունը շինծու է։

Բնգ.— «Երկինդ եւթն պարունակք են, որ կոչեն գոտիկք» (էջ 325)։

Թրգ.— «Երկնքում գոյություն ունեն 7 ուրտներ, որոնք կոչվում են գոտիներ» (էջ 118)։

Վ. Ա.— «Այստեղ ասված է, որ երկինքը կազմված է 7 պարունակներից։ Մինչդեռ թարգմանության մեջ երկինքն առանձին մարմին է. պարունակները զատ մարմիններ են. «Երկնքում գոյություն ունեն 7 ուրտներ» (էջ 297)։

Նախ՝ մեջբերումը կատարել է աղճատված. բաց է թողնել ընդգծված բառերը՝ «որ կոչեն գոտիկք»։ Ապա, գրախոսողը չհասկանալով պարունակ բառի իմաստը, կարծում է, թե երկինքը և գոտիները, իր բառերով առած՝ «նույն մարմիններն են»։ Իրականում, պարունակ են կոչվում յոթ մոլորակների գոտիները։ Ըստ որում, շարունակության մեջ նշվում է նաև, թե այդ գոտիներից որը ինչ հատկություն ունի։

Բնդ.— «Յաղագս աշխարհագրութեանց յաստուածային գիրս ոչ ուրեք գտանեմք ոճով ասացելալ, այլ ղոյզն ինչ ղուն ուրեք եւ այն դժուարահաս և տաժանելի» (էջ 336)։

Թրգ.— «Աշխարհագրութեան մասին Աստուածաշնորհում չկան լիակատար տեղեկություններ, [իսկ եղածները] ցրված են այս ու այն տեղ և բարդ են ու դժվար հասկանալի» (էջ 258)։

Վ. Ա.— «Շիրակացու խոսքը շատ պարզ է և պետք է թարգմանել այսպես. «Աստվածաշնորհում աշխարհագրութեան մասին ոչ մի տեղ չենք գտնում հանգամանորեն պատմված, այլ սակավ տեղերում շնչին բան և այն էլ դժվարամատչելի և տաժանելի» (էջ 297)։

Տվյալ պարբերությունը ճիշտ հասկանալու բանալին «ոճով ասացելալ» բառերն են. Շիրակացին ի՞նչ է փնտրել և չի կարողացել գտնել. աշխարհագրական տեղեկություններ, ինչպես մենք ենք հասկացել և թարգմանել, թե՛ աշխարհագրութեան մասին պատմվածի («հանգամանորեն պատմված»), ինչպես գրախոսողն է առաջարկում թարգմանել. Չենք կասկածում, որ Շիրակացու փնտրածը աշխարհագրական տեղեկություններն են եղել. Այսպե՛ս ինչպե՛ս թարգմանել «այլ ղոյզն ղուն ուրեք» բառերը՝ «Իսկ եղածները ցրված են այս ու այնտեղ», ինչպես մենք ենք թարգմանել, թե՛ «սակավ տեղերում շնչին բան», ինչպես քննադատը։ Գտնում ենք, որ այստեղ ոչ «շնչին բան»-ի մասին խոսք կա և ոչ էլ «սակավ տեղերի»։

Բնդ.— «Ջտան սրբոյն զատկիս ուսաք ի Մովսեսի և յելիցն Խորայելի յնգիպտոսէ» (էջ 292)։

Թրգ.— «Ջատկի սուրբ տոնը մենք սովորեցինք Մովսեսից՝ [հիմք ունենալով] Խորայելցիների նգիպտոսից դուրս գալը» (էջ 160)։

Վ. Ա.— «Փակագծերը ավելորդ են։ Այստեղ պարզորեն ասված է. «Ջատկի տոնը մենք սովորեցինք Մովսեսից և Խորայելցիների նգիպտոսից դուրս գալուց» (էջ 297)։

Ջատկի տոնն առաջին անգամ սահմանել է Մովսես մարգարեն՝ հիմք ընդունելով Խորայելի ժողովրդի եգիպտական գերությունից դուրս գալը, իսկ սա տոմարագիտության մեջ հայտնի ճշմարտություն է, փակագծեր դնելով մենք ցանկացել ենք ճշգրտված ներկայացնել փաստը։

Բնդ.— «Իսկ ի կենսաբեր յարութեանն զատկի, ի ձեռն մեռուցանելոյ զմեղս մեր ի ջուրս աւաղանին նմանողը լինիմք մեռելութեան մահուան տեսան մերոյ Յիսուսի Քրիստոսի» (էջ 284)։

Թրգ.— «Կենսաբեր զատկի հարություն օրը մեր մեղքերն ավազանի ջրին հանձնելով, նրա մանող լինենք մեր տեր Հիսուս Քրիստոսի մահվան անմահության» (էջ 149)։

Վ. Ա.— «Անմահության մասին այստեղ ակնարկ անգամ չկա, խոսքը վերաբերում է մեռելների մահվան» (էջ 297)։

Սխալվում է գրախոսողը. մեռելություն մահվան նույնպիսի կապակցություն է, ինչպիսիք են մարտ պատերազմի, խռովություն շփոթություն և այլն, որոնք պետք է թարգմանել մարտ և պատերազմ. խռովություն և շփոթություն (գրաբարյան իմաստով) կամ պարզապես՝ պատերազմ, խռովություն, ուստի և ճիշտ կլիներ՝ մեռելության և մահվան, կամ ուղղակի՝ մահվան։ Բայց քանի որ խոսքը Քրիստոսի մահվան մասին է, որը մահանալով անմահացավ, հարմար ենք գտել ավելացնել անմահություն բառը. լավ կլիներ, իհարկե, եթե փակագծի մեջ առած լինեինք։ Համենայն դեպս, խոսքը մեռելների մասին չէ. գրախոսողը պետք է կարողանար տարբերել մեռելությունը մեռելալից։

Բնդ.— «...Ոչ զամսոյն կոչէ տասն, այլ ղլուսին, քանզի ամսոյն առաջնոյ որ անուանեալն նիսան ութ եւ լուսնի տասն» (էջ 294)։

Թրգ.— «Այդ «տասը» ասելով նա նկատի լուսնի լուսնական օրը, քանի որ նկատի ունի ոչ թե ամսվա տասը, այլ լուսնի առաջվա ամսվա, որ նրա 18-ն էր արեգակնային օրվա հաշվով, իսկ լուսնային տասը» (էջ 164)։

Վ. Ա.— «Այդ նախադասության ճիշտ վերծանությունը բուրրովին այլ է. «Ոչ թե ամսի տասն է ասվում, այլ լուսնի տասը, որովհետև առաջին ամսի, որ կոչվում էր Նիսան, 18-ն էր, իսկ լուսնի՝ տասը»։

Գրաբարի բնագիրը բերված է աղավաղված. բաց են թողնված «եւ լուսնի տասն» բառերը. մեր թարգմանությունն անհաշող է, բայց անհաշող է նաև Առաքելյանի առաջարկած թարգմա-

նությունը և անհասկանալի ձիշտ կլինի. «Ոչ թե [արեգակնային] ամսվա տասն է ասում, այլ [լուսնական], քանզի [այդ օրը] Նիսան կոչվող առաջին ամսվա 15-ն էր, իսկ լուսնի՝ տասը»:

Բնգ.— «Վասն զի թխացեալ աւղն այնպէս ցուցանէ զեղջերսն լուսնի»

Թրգ.— «Որովհետև թխած եղանակին լուսնի եղջյուրներն այդպես են երևում» (էջ 315):

Վ. Ա.— «Այստեղ թխած եղանակի մասին խոսք չկա: Բնագրի ձիշտ վերարտադրութունն է. «Որովհետև սեացած օղն այսպես է ցույց տալիս լուսնի եղջյուրները» (էջ 288):

Մեր թարգմանության անհաջող կրկնողությունն է, այն տարբերությամբ, որ թխացեալ օղը գրախոսողի մոտ դարձել է սև օդ: Իրականում, օղը գործ էածված եղանակի համար:

Բնգ.— «Յորժամ երկուցուն կողմանցն հա- սարակեալ լուսինն միայն...» (էջ 305):

Թրգ.— «Երբ լուսնի երկու բաժան թևերը (այսինքն՝ եղջյուրները) միացված են երկվում» (էջ 316):

Վ. Ա.— «Այստեղ թևերի միացման մասին խոսք չկա, այլ ասված է «Երբ լուսինը հավասարապես է կիսված երկու կողմերի» (էջ 298):

Լուսնի երկու կողմերը՝ նրա երկու եղջյուրներն են, որոնք որոշ օրերի ընթացքում աճելով միանում են. խոսքն այդ մասին է: Մեջբերումը վերցված է աղճատված, եթե նա բերեք շարունակությունը՝ Երբ յաճումնս իցէ, երբ է մաշս եւ եղջերքն հարթեալ եւ մէջ հասարակիս լցեալ», ապա մեղադրանքի համար տեղ չէր մնա:

Բնգ.— «Յորժամ ի լուսինն մլար լինի և յա- մենայն կողմանց զլուսինն թաղանթեալ իցէ» (էջ 305):

Թրգ.— «Երբ լուսինը մշուշապատ է բոլոր կողմերից և թաղանթապատված» (էջ 316):

Վ. Ա.— «Ձիշտ թարգմանությունն է. «Երբ լուսնի վրա մշուշ կա և բոլոր կողմերից պատում է լուսինը» (էջ 298):

Մեր թարգմանության վատ խմբագրությունն է. տարբերությունն այն է, որ մեղ մոտ լուսինը պատված է մշուշով, իսկ քննադատի մոտ մշուշը լուսնի վրա է:

Բնգ.— «Եւ զոր ճառել արժանաւոր եղաք» (էջ 283):

Թրգ.— «...որը բանախոսելու արժանի եղանք» (էջ 148):

Վ. Ա.— «Ձիշտն է. որը գրել արժան համարեցինք» (էջ 298):

Ճառել՝ նշանակում է ճառախոսել, բանախոսել, ատենախոսել և ոչ գրել (Մալխասյանց. Կ. III, էջ 201):

Բնգ.— «...եւ պարապեաց յիս յամենայն խորհրդոց իւրոց...» (էջ 207):

Թրգ.— «...և պարապեց ինձ հետ ողջ իմացությամբ» (էջ 26):

Վ. Ա.— «Այս նախադասությունը գրաբարի շատ նուրբ տեղերից է և նշանակում է. Նա իմ մեջ դատարկեց (այն որ բարբառում ասվում է պարբեց) իր բոլոր գաղտնիքները» և ոչ թե ինձ հետ պարապեց» (էջ 297):

«Եւ պարապեաց յիս յամենայն խորհրդոց իւրոց» նշանակում է՝ «Ինձ հետ պարապեց և տվեց իր ողջ իմացությունը»: Թե որքան հաջող է քննադատի կողմից առաջարկվող թարգմանությունը, թողենք դատելու ընթերցողներին: Բայց, այնուամենայնիվ, ուզում ենք հարցնել բանասեր գրախոսողին, արդյո՞ք հայերեն կլինեք, եթե, օրինակ, ասելու լինենք. «Կիրակոսն իր իմացությունը դատարկեց Մաթեոսի մեջ»:

Բնգ.— «Զտաւանն ծննդեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է սկիզբն տաւնից եւ տարեկանաց մերոց, եւ զլուսն կցուրդաց եւ ամենայնից ի Քրիստոս յիշատակաց» (էջ 283):

Թրգ.— «...որը մեր տարեկան տոների առաջնեկն է և հանգիսավորության ու բոլոր տեսակի քրիստոնեական հիշատակների գլխավորը» (էջ 148):

Վ. Ա.— «Ձիշտն է. որ մեր տոներին և տարվա գլխավոր օրերի սկիզբն է, տոնախմբությունների և Քրիստոսի բոլոր հիշատակությունների գլխավորը» (էջ 299):

Մեջբերումը աղավաղված է, բաց է թողել Չտաւնն ծննդեան Քրիստոսի Աստուծոյ մեռոյ՝
բառերը: Գրախոսողի առաջարկած թարգմանությունը սխալ է. «Մեր տոները» և «Տարվա տո-
ները» տոնական համակարգում առանձին-առանձին գոյություն չունեն, իսկ «գլխավոր տոնե-
րը»՝ գրախոսողի ստեղծագործությունն է: Եվ այսպես, երկու տողում երեք սխալ և մի աղ-
ճատում:

Բնգ.— «Իսկ յետ բազում ամաց նոցա կանո-
նադրութեանն գտաւ տաւնս այս, որպէս ասեն
ոմանք, յաշակերտաց հերձուածոյն Կերինթոսի»
(էջ 283):

Թրգ.— «Այս կանոնադրութիւնից շատ հետո,
ինչպես ասում են ոմանք, Կերինթոսի աղան-
դավոր աշակերտները, այս երկու տոները բա-
ժանեցին իրարից» (էջ 148):

Վ. Ա.— «Ասենք, որ գտաւ նշանակում է գտնվив, ուստի և նախադասության ճիշտ թարգ-
մանությունը կլինի այսպես. Հնրանք կանոնադրութիւնից շատ տարիներ հետո այս տոնը
դրսնվեց (ավելի ճիշտը՝ հնարվեց), ինչպես ոմանք են ասում Կերինթոսի աշակերտների կող-
մից» (էջ 299):

Քննադատը չի հասկացել շարադրանքի իմաստը. խոսքը ծննդյան տոնը մկրտության տո-
նից բաժանելու և 12 օր առաջ տանելու մասին է, իսկ բաժանումը կատարել են Կերինթոսի
աշակերտները: Այդ մասին ասված է առջևում:

Բնգ.— «Բայց կարգաւորութիւն մկրտութեան
սրբոյ աւագանին և փոյթ յաւժարութեանն
Գ տաւնիցն, յորում առաւել ևս փափագեն
միգաղղ փութացուցանել ի մկրտութիւն զնծա-
յեալսն Աստուծոյ, եւ կատարել զարիւնակ մեծ
փրկական խորհրդեանն» (էջ 284):

Թրգ.— «Բայց սուրբ ավագանի մկրտու-
թյան կարգը և երեք տոները փութաջան կա-
տարելու ցանկութիւնը, որոնցից Աստու-
նծալվածներն ամենից մեծ աճապարանքով
ցանկանում են կատարել մկրտութեան տոնը
իրրև մեծ փրկական խորհուրդ» (էջ 149):

Վ. Ա.— «Ամբողջովին աղավաղված այս հատվածի ստույգ թարգմանությունն է. «Բայց
սուրբ ավագանի մկրտության կարգավորությունը և երեք տոները ընդունումը, որին ավելի ևս
փափագում է մեր ազգը շտապեցնելու Աստծու ընծայածների (այսինքն երեխաների) մկրտու-
թյունը և կատարելու մեծ փրկական խորհրդի օրինակը» (էջ 299):

Նախ՝ մկրտության կարգավորություն չեն ասում, այլ մկրտության կարգ: Երկրորդ,
խոսքը երեք տոների ընդունելու մասին չէ, այլ երեք տոները փութաջան կատարելու: Երրորդ,
միգաղղը «Մեր ազգ» համարելը՝ քննադատի ֆանտազիան է. միգաղղը՝ անստույգ բառ է,
հավանաբար գործածված «ավելի արագ», «ամբիջպես» կատարելու բառերի համար: Չոր-
րորդ, «ընծայված» չի նշանակում երեխա, այլ քրիստոնյա հավատացյալ ընդհանրապես: Այս-
պես, գրախոսողը մի նախադասության մեջ թույլ է տվել չորս սխալ:

Բնգ.— «Ապա այնուհետեւ գային առ նա ան-
դուստ յուսումն» (էջ 208):

Թրգ.— «Այնուհետեւ այնտեղից էին գալիս
նրա մոտ սովորելու» (էջ 28):

Վ. Ա.— «Մինչդեռ Կոստանդնուպոլսից Տյուքիկոսին կանչում են, չի գնում, ուստի սովոր-
ողներն այնտեղից նրա մոտ են գալիս» (էջ 299):

Տյուքիկոսը Պոլսից էր եկել և հաստատվել Տրապիզոնում, և նրա մոտ, որպես ականավոր
գիտնականի, սովորելու էին գալիս ուսանողներ Պոլսից, ինչպես ասված է թարգմանության
մեջ: Նույնն է ասում և գրախոսողը: Իսկ թե ինչի՞ համար է շինծու այդ «դիտողությունը»,
հայտնի չէ:

Բնգ.— «Այսպ թէ լուսնին ի միողէ կողմանէ
մլարն պատառի եւ ձգի» (էջ 305):

Թրգ.— «Իսկ եթե լուսնի մշուշապատություն-
նը մի կողմում մնա...» (էջ 216):

Վ. Ա.— «Ճիշտ թարգմանությունն է. «Իսկ եթե լուսնի մշուշը մի կողմից պատավի ե
ձգվի» (էջ 298):

Քննադատը երկու տողի մեջ երկու սխալ է թույլ տալիս. նախ՝ «լուսնի մշուշ» գործածու-
թյունը սխալ է. լուսինը սեփական մշուշ չունի: Այսինքն չի կարելի ասել նաև, թե մշուշը պա-
տեղակ է ձգվեց, հայերեն չէ. մշուշը գիրք չէ, որ պատավի և ռետին չէ, որ ձգվի: Հավանական
ենք համարում՝ բնագրի «պատավի» բառն աղավաղում է «պատի» բառի:

Բնդ.— «Եւ անտի լինի ձգումն հողմոյն, ուս-
տի ձգումն մլարին եղև» (էջ 305):

Թրգ.— «...հողմը կլինի այն կողմից, որ
կողմում է մշուշը» (էջ 316):

Վ. Ա.— «Ուղիղ թարգմանությունն է. «Այնտեղից կփչի հողմը, որտեղից մշուշը ձգվեց»
(էջ 298):

Մեր թարգմանության անհաջող խմբագրությունն է, այն տարբերությամբ, որ մենք «ձգի»
ասելով մշուշի որևէ տեղում գտնվելը, ծավալվելն ենք հասկանում, իսկ քննադատը՝ մշուշի
հրկարելը:

Բնդ.— «...Դիրդին եւ սարսափին նախ
գրահանայիք պատէր» (էջ 286):

Թրգ.— «Դիրդյունը և սարսափը պատել էր
քահանաներին»:

Վ. Ա.— «Դիրդյունը ինչպե՞ս կարող է քահանաներին պատել, դեռ չխոսենք պատելու
մասին... Դիրդյունը այստեղ հոմանիշ է սարսափ բառին և պետք է թարգմանել՝ ահ, երկյուղ
և վախ» (էջ 299):

«Դիրդյուն», «սարսափ» և «պատել» բառերը՝ մերը չեն, այլ Շիրակացունը, հիմք չու-
նենք ոճաբանության սխալի մեջ մեղադրելու Շիրակացուն: Իսկ քննադատի առաջարկը՝
դիրդյունի համար օգտագործել «ահ», «երկյուղ» և «վախ» բառերը, սխալ է. Մենք պահպանել
ենք բառն անփոփոխ, որովհետև դիրդյուն նշանակում է ոչ միայն՝ դրդալը, դրդալու՝ ձայնը,
այլև իրարանցում (Մալխ. 1, էջ 532), դա պետք է որ հայտնի լիներ քննադատին:

Կարող են մեղ հարցնել. մարդը ամիսներ շարունակ նստել է Անանիա Շիրակացու մատե-
նագրության թարգմանության վրա, փորձել է ծայրեծայր սխալներ և թերություններ փնտ-
րելու դիտումով, մի՞թե նրան չի հաջողվել գտնել այնպիսիները, որոնք կարելի էր ընդունել:
Ճշմարտության դեմ չմեղանչելու համար ասենք, որ նա նկատել է մի քանի վրիպակներ և
անհաջող ձևակերպումներ: Դրանք հետևյալներն են.

Բնդ.— «Եւ դարձեալ երանութեան կամեցայ
ժամանել, զնալ փափաղեցի իմաստասիրու-
թեանն» (էջ 206):

Թրգ.— «Երանության հանգրվանեցի և փա-
փաղեցի հետեւ իմաստասիրության» (էջ 25):

Վ. Ա.— «Բնագրում մարդը կամենում է հասնել երանության, իսկ թարգմանության մեջ
արդեն հանգրվանել է» (էջ 296):

Ճիշտ կլիներ թարգմանել «Երանության կամեցա հանգրվանել և փափաղեցի հետեւ
իմաստասիրության»: Այստեղ հանգրվանել՝ նպատակին հասնելու իմաստով է թարգմանված
և ճիշտ է:

Բնդ.— «Ոմանք կարծեցին զանունս զայս
փրկութեան շարժարանաց լիալ եւ ապա հեղե-
նացի արարեալ զձայնն զփիւրն ի պէ փոխե-
ցին և զկինն ի քէ, պասքա անուանեցին» (էջ
294):

Թրգ.— «Ոմանք կարծում են, թե այս անու-
նը շարժարաններից փրկություն գտնելու հա-
մար է գրված, իսկ հետո հելլենները «փյու-
րը» փոխել են «պի»-ի, իսկ «կեն»-ը «քի»-ի
և փրկչին «պասքա» անվանել» (էջ 163):

Վ. Ա.— «Այս նախադասության մեջ երկու սխալ կա, որ նախադասության միտքը փոխել
են. նախ հելլենացի չի նշանակում հելլեններ, այլ հունարեն և հելլենները փրկչին պասքա չեն
կոչել, այլ ոմանք փրկչի օրն են պասքա կոչել: Ըստ երևույթին «գոր»-ը որ է հասկացել»
(էջ 297):

«Հեղեհնացի» բառը ճիշտ կլիներ ոչ թե թողնել հելլեններ, այլ թարգմանել հունարեն:
«Պասկա»-ից առաջ մեր նախադասության միջից օր բառը դուրս է ընկել:

Բնդ.— «Եւ անմարթ էր քահանայապետին
թողուլ զժողովուրդն եւ երթալ ի տուն իւր, զի
բացեայ և ոչ յծրուսաղեմ ունէր զբնակութիւն
իւր» (էջ 289):

Թրգ.— «...ուստի չէր պատշաճում, որ քա-
հանայապետը թողներ ժողովուրդը և գնար իր
տունը, ըստ որում, ոչ թե Երուսաղեմում, այլ
բացօթյա էր ապրում» (էջ 156):

Վ. Ա.— «Նոսքը քահանայապետի մասին է, ինչո՞ւ պետք է բացօթյա ապրեր, վրանա-
բնակ էր, բացօթյա կարող էր հենց տաճարի մոտ լինել: Մինչդեռ բացեայ նշանակում է հե-
ռու, բաղաբից դուրս» (էջ 299):

«Բագեայ»-ն՝ բացօթյա թարգմանելը մեզ՝ մոտ հաջող չէ։ Բայց ճիշտ չէ նաև գրախոսողի առաջարկածը. «Բագեայ նշանակում է հեռու, քաղաքից դուրս», քանի որ քահանայապետի Երուսաղեմից հեռու կամ մոտիկ ապրելը մեզ հայտնի չէ, ուստի ճիշտ կլինի թարգմանել «Իր բնակության վայրը Երուսաղեմում չէր գտնվում»։

Բնդ.— «Եւ այդ երրորդ նշանն է դժնդակ, Թրգ.— Իսկ այդ երրորդը՝ դժնդակ եղանակաւ առաւել պատճառ յուղման ձմերայնույն» (էջ 41)։
Կի նշանը ձմռան գալուստն է գուշակում (էջ 317)։

Վ. Ա.— «Ահա այդ նախադասության ստույգ նշանակությունը. «Եվ այս երրորդը նշան է դաժան ձմեռվա և պատճառ ձմեռային փոթորիկի» (էջ 298)։

Մեր թարգմանությունն անհաջող է, բայց անհաջող է նաև Վ. Առաքելյանի թարգմանությունը, ճիշտը կլինի. «Եվ այս երրորդը՝ դժնդակության նշան է և գուշակում է փոթորկալի ձմեռն»։

Բնդ.— «Յորժամ արեգական պատարումն լինի եւ առանց ամպոյ մտանէ՝ եթէ լինիցի առ յորթյամբ և մայրամուտի ժամանակ ազատ է նուլաւ շիկագոյն ամպ՝ ոչ զցայգս եւ ոչ զառաջիկայ աւրն չէ ակնկալութիւն անձրեւի» (էջ 306)։
Թրգ.— «Երր արեգակը երեւում է լրիվ կլորությամբ և մայրամուտի ժամանակ ազատ է լինում ամպամածությունից, կամ եթե պատահում է, որ շիկագույն ամպեր են լինում, ոչ այդ օրը և ոչ էլ հաջորդ օրը անձրևներ չեն լինելու» (էջ 318)։

Վ. Ա.— «Բայց չէ որ արևը մտնում է, այլևս այդ օրը չկա, կա միայն օդի ծռոտ. որն արտաշայտված է ցայտն ձևով» (էջ 299)։

«Ցայգ» իրոք նշանակում է գիշեր, բայց մենք, նկատի ունենալով այն, որ պարբերության սկզբում ասվում է, թե «յորժամ արեգակն պատարումն լինի», այսինքն՝ «երբ արեգակը երեւում է կլորությամբ», ուստի ցերեկը և գիշերը իրար հետ միասին վերցրած գործ ենք անել օրը։ Բայց եթե նկատի ունենանք պարբերության երկրորդ մասը՝ ուր հիշվում է մայրամուտը, ճիշտ կլինի թարգմանել գիշերը։

Վերջացնենք։ Մենք քննարկեցինք «Անանիա Շիրակացու» մեր թարգմանության առթիվ Վ. Առաքելյանի արած ռիտորությունների մի սղալի մասը։ Ազդեցության արժեքն էր արած երկու ռիտորությունները՝ Շիրակացու գաղափարական ուղղության և արած ժամանակաշրջանի մասին, անընդունելի են։ Բնագրային բնույթի ռիտորությունը՝ Շիրակացու «Կառն որպիսութեան կենաց իւրոցը» ինքնակենսագրական շնորհակցությունը, մտացածին է, իսկ ուս. վերաբերում է թարգմանության ռիտորություններին, ապա պետք է ասել, որ ընդունելով մեր թարգմանության մեջ թույլ տրված մի քանի վրիպումներ, միաժամանակ չենք կարող շեշել, որ գրախոսողը սխալվում է իր ռիտորությունների ղգալի մասում։

ПО ПОВОДУ ОДНОЙ РЕЦЕНЗИИ

Проф. А. Г. Абрамян, проф. Г. Б. Петросян

(Резюме)

В № 4 «Историко-филологического журнала» за 1981 г. была опубликована рецензия В. Аракеляна на наш перевод с габара на современный армянский язык трудов армянского ученого VII века Анании Ширакаци. В своей рецензии В. Аракелян сделал ряд критических замечаний по поводу данного перевода. Мы доказываем, что эти замечания в основном не соответствуют действительности. Рецензия написана В. Аракеляном односторонне и весьма тенденциозно.